ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/40498-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին և «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-1187-11.11.2025-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը.

«**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում՝**

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը առ այն՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:

Հետևաբար, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 օրենքի» բառերը փոխարինել «2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» բառերով:

2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի

հերթականությամբ»: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 67-րդ հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում, նոր լրացվող 2.1-ին մասում եւ 68-րդ հոդվածում կիրառել «կառավարության» ձեւակերպումը՝ համապատասխանեցնելով այն Օրենսգրքում կիրառվող ձեւին:

3. Քանի որ Նախագծով նախատեսվում է իրականացնել մեկ լրացում՝ առաջարկվում է նախագծի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով:

4. Առաջարկում ենք Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, քանի որ այնտեղ առկա կարգավորումները վերաբերելի են դասական աճուրդներին և էլեկտրոնային աճուրդ կազմակերպելիս կարող են շփոթություն առաջացնել: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 3. Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 68. Աճուրդի կազմակերպումը

1. Աճուրդը, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերի, կազմակերպում է համայնքի ղեկավարը էլեկտրոնային համակարգի միջոցով՝ կառավարության սահմանած կարգին համապատասխան:»:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝

5. Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետություն» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջները:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ